ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ , ԳԻՏՈՒԹՅԱՆ ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

<<ԱԲՈՎՅԱՆԻ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ>>

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

<< Կոտայքի մարզ, ք. Աբովյան,2208, Ռուսանողական թաղամաս 3, հեռ.(0222) 2-14-67,E-mail abovyanedu@mail.ru

N 073

« 04» 12 2023թ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին

«Ֆոտոն» ՍՊԸ-ի
տնօրեն՝ Ն. Պետրոսյանին

Հարգելի **Ն. Պետրոսյան**

«Աբովյանի կրթահամալիր» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Գնորդ) և «Ֆոտոն» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2023թ.-ի օգոստոսի 23-ին կնքված **ԱԿՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-2023/2-5** ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում Վաճառողը ստանձնել է պարտավորություն մատակարարել Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ապրանքները, որոնց մատակարարման ժամկետը Պայմանագրով սահմանված է՝ Պատվիրատուից պատվերը ստանալուն հաջորդող աշխատանքային օրվա ընթացում:

2023թ.-ի նոյեմբերի 29-ին «Ֆոտոն» ՍՊԸ-ի էլեկտրոնային հասցեին ուղարկվել է պատվեր՝ պահանջագիր ԱԿՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-2023/2-5 ծածկագրով պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանված ապրանքների որոշակի քանակությամբ մատակարարման համար, սակայն պայմանագրով սահմանված ժամկետում մասնակցի կողմից մատակարարումը չի իրականացվել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով «Աբովյանի կրթահամալիր» ՊՈԱԿ-ը հարկադրված է 2023թ.-ի դեկտեմբերի 04-ից Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծել: Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ հայտնում ենք, որ Վաճառողին տրվում է 5 աշխատանքային օր՝ որակավորման և պայմանագրի ապահովումները վճարելու համար: Փոխանցումը անհրաժեշտ է կատարել Գնորդի բանկային հաշվին **(ՀՀ ՖՆ ԳՎ Հ/Հ 900108000523)**:

Սահմանված ժամկետում փոխանցումը չկատարելու դեպքում պարտավորվում ենք <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6/ա-րդ կետի համաձայն «Ֆոտոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու որոշում կայացնել:

Տնօրեն՝ **Ա. Դաղբաշյան**